ՓՐԿՉԻ ՀՐԱՇԵԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Յ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ԴԱՀԱԿԱԼՆԵՐԻՆ ԵՎ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ

Այսօր մեծ ավետիս կուտանք Ձեզ մեր Տիրոջ և Փրկչի Իշման Ս. Տաճարին՝

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց,
Մահուամբ զմահ կոխեաց
Եւ յարութեամբն իւրով
Մեզ զկեանս պարգևեաց»:

Այս սուրբ հարության ուրախությամբ ոգեշնչված, Մեր հայրապետական ողջույնը և օրհնությունը կբերեմ Ձեզ, հոգևոր դասուն, ազգային-եկեղեցական Ձեր իշխանություններուն և կազմակերպություններուն և համայն մեր հավատացյալ և սիրեցյալ ժողովուրդին, սրտաբուխ մաղթանքներով, որ հարուցյալ Փրկչի սերն ու խաղաղությունը իջնեն ու հաստատվին Ձեր բոլորիդ սրտերուն մեջ, ի շինություն մեր Սրբազնասուրբ եկեղեցիին, ի միաբանություն Ազգիս բոլոր զավակներուն անխտիր և ի մխիթարություն հավատքի վեմ Մայր Աթոռիս:

Հրաշափառ հարության շնորհները Ձեզ բոլորիդ համար բող հանդիսանան աղբյուր բաջառողջության հոգվո և մարմնո, և առաջնորդ ոգի Ձեր ապրումներուն, Ձեր խոհերուն և ձեռաց գործերուն:

«Օրհնեալ է Աստուած և Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ըստ բազում ողորմութեան իւրում ծնաւ զմեզ վերստին ի յոյսն կենդանի, ի ձեռն յարութեանն Յիսուսի Քրիստոսի ի մեռելոց» (Ա. Պետր. Ա. 3):

Արդ, «ողջոյն տուք միմեանց ի համբոյր սրբութեան»: Եվ «խէր և խաղաղութիւն եղիցին ընդ ձեզ ամենեսին, որ էք ի Քրիստոս Յիսուս. ամէն»:

Օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Նմանօրինակ շնորհավորական գրություններ ուղարկվեցին նաև բիմական և կրոնական խորհուրդներին, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Կենտրոնական վարչության (Նյու-Յորք), Դալուստ Կյուլպենկյան հիմնարկության կենտրոնական խնամակալության մեծահարգ նախագահ դոկտ. Ժոզե դե Աղերեդո Պերդիգաոյին (Լիսաբոն), Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարանի հանձնախմբին (Նյու-Յորք), Աբգարյան ավանդի և Ս. Էջմիածնի հիմնադրամի հանձնաժողովին (Լոնդոն), Մայր Աթոռ Ս. Էջմիածնի օժանդակ հանձնախմբին (Բեյրութ), հայրենակցական, մշակութային, տիկնանց, երիտասարդաց և օրիորդաց զանազան կազմակերպություններին, Մայր Աթոռի բարերարներին և ազգային ծանոթ դեմքերին: